*«Գրանցված է»*
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*1 սեպտեմբերի 2006 թ.*
*Պետական գրանցման թիվ 10206257*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

29 օգոստոսի 2006 թ. թիվ 163-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12.1-րդ հոդվածի 2-րդ մասով

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել հարկադիր կատարման ծառայության թափուր պաշտոնի մրցույթի հայտարարության ձևը (հավելված N 1)՝ կցվում է:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

**Դ. Հարությունյան**

**Հավելված N 1**
**ՀՀ արդարադատության նախարարի**
**2006 թվականի օգոստոսի 29-ի**
**թիվ 163-Ն հրամանի**

***Ձև***

## ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Հարկադիր կատարման ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասին մամուլի միջոցով տրվող հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

1. Թափուր պաշտոնի անվանումը
2. Տվյալ պաշտոնի համար առաջադրվող պահանջները
3. Տվյալ պաշտոնի գործառույթների նկարագիրը
4. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը
5. Փաստաթղթերն ընդունելու ժամկետները և վայրը
6. Մրցույթի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը և վայրը